



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N°10/13

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ 19.12.2012թ. օրենքը, Հայաստանի Հանրապետության դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով անցկացվող արտահերթ որակավորման ստուգման արդյունքները և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 116-րդ հոդվածի առաջին մասով՝ Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացնել դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով անցկացվող արտահերթ որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած 15 հավակնորդների արդյունքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակել Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացված ցուցակները և յուրաքանչյուր թեկնածուի կրթության, հետբուհական աշխատանքային գործունեության և ընտանեկան դրության վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն հավելված 2-ի:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ե. Խունդկարյան
15 մարտի, 2013թ.
ք. Երևան

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼԲԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

N	Անուն, ազգանուն	Հանրագումարային միավոր
1	Մերի Համբարձումյան	111
2	Արմեն Դավթյան	108
3	Աննա Դիլբարյան	102
4	Ալեքսանդրա Հարությունյան	102
5	Արսեն Նիկողոսյան	97
6	Ժաննա Ասատրյան	96
7	Սամվել Մատինյան	93
8	Գևորգ Մոսյան	92
9	Հրաչ Այվազյան	91
10	Արթուր Ավագյան	91
11	Լիանա Հակոբյան	91
12	Կարեն Զարիկյան	90
13	Միքայել Մելքումյան	90
14	Արկադիկ Մկրտչյան	90
15	Արման Դիլանյան	86

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հրապարակում է դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով անցկացված արտահերթ որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած հավակնորդների ցուցակը

Հրաչ Մարտունի Այվազյան

Ծնվել է 25.02.1974թ. Լոռու մարզի Օձուն գյուղում: 1996թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: 09.02.1999-24.01.2008թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության /ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական գլխավոր վարչությունում, որպես առաջատար մասնագետ, ապա՝ գլխավոր մասնագետ, այնուհետև՝ բաժնի պետ: 29.01.2008-14.11.2011թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես նախագահի խորհրդական: 14.11.2011-02.12.2011թթ. աշխատել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահի խորհրդական: 02.12.2011թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ Նախագահի աշխատակազմի վերահսկողական ծառայությունում՝ որպես գլխավոր մասնագետ: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Ժաննա Համլետի Ասատրյան

Ծնվել է 18.02.1974թ. Երևանում: 1995թ. ավարտել է Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանը՝ իրավաբան-քրեագետի որակավորմամբ, 2005թ.՝ Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանի բակալավրիատը, 2008թ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրան՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 19.02.1996-12.01.1999թթ. աշխատել է ՀՀ Գերագույն դատարանում՝ որպես քրեական գործերի դատական կոլեգիայի նիստերի քարտուղար: 12.01.1999-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերի պալատի դատավորի օգնական: 01.01.2008-23.03.2009թթ. աշխատել է Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես գրասենյակի պետ: 23.03.2009-05.09.2012թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական, ապա՝ դատավորի օգնական: 05.09.2012թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած չէ:

Արթուր Ռաֆայելի Ավագյան

Ծնվել է 18.05.1984թ. Երևանում: 2005թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը: 10.01.2008-29.10.2008թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար, այնուհետև՝ 29.10.2008-18.04.2012թթ. ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 18.04.2012թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած չէ:

Արման Էդուարդի Դիլանյան

Ծնվել է 23.09.1974թ. Արարատի մարզի Գետափնյա գյուղում: 1996թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 21.08.1996թ.-ից աշխատում է ՀՀ սահմանադրական դատարանում՝ որպես աշխատակազմի քարտուղարության առաջին կարգի մասնագետ, ապա՝ նախագահի տեղակալի օգնական, այնուհետև՝ իրավախորհրդատվական ծառայության անհատական դիմումների բաժնի վարիչ: 03.04.2006թ. առ այսօր հանդիսանում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչ: 29.09.2012թ.-ից առ այսօր կատարում է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության /վարչության/ անհատական դիմումների բաժնի վարիչի պարտականությունները: Ամուսնացած է:

Աննա Համլետի Դիլբարյան

Ծնվել է 05.11.1987թ. Սպիտակում: 2008թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2010թ.՝ մագիստրատուրան: Աշխատել է որպես իրավաբան «Դայլոգ Ինվեստ» ՍՊԸ-ում (07.01.2008-10.01.2011թթ.), «Դիլբո Սթար» ՍՊԸ-ում (03.10.2011թ-ից առ այսօր, համատեղության կարգով), «Արտ-Լար Ֆինանս Ընդ Ըքստենթինգ» ՍՊԸ-ում (03.10.2011-31.08.2012թթ.): 16.10.2010թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր և զբաղվում է փաստաբանական գործունեությամբ: Ամուսնացած չէ:

Արմեն Սերյոժայի Դավթյան

Ծնվել է 03.03.1970թ. Արագածոտնի մարզի Բազմաղբյուր գյուղում: 1997թ. ավարտել է «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտը, 2006թ. Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանում հանձնել է պետական քննություններ և ստացել պետական նմուշի բարձրագույն կրթության դիպլոմ՝ իրավագետի որակավորմամբ: 01.09.1996-25.11.1997թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ որպես իրավաբան-գործակալ, 29.04.1999-28.10.2001թթ.՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար, 24.11.2001-26.01.2007թթ.՝ ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես դատավորի օգնական, 26.01.2007-01.01.2008թթ.՝ ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի խորհրդական, 01.01.2008-11.02.2009թթ.՝ Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 02.03.2009թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Կարեն Բարսեղի Չարիկյան

Ծնվել է 18.01.1987թ. Երևանում: 2009թ. ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2011թ.՝ մագիստրատուրան: 09.09.2008-02.12.2010թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում, որպես դատավորի գործավար, ապա՝ դատավորի օգնական, այնուհետև՝ իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ: 18.11.2011թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատարանի նախագահի խորհրդական: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Մերի Գևորգի Համբարձումյան

Ծնվել է 26.07.1986թ. Գյումրիում: 2007թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2009թ.՝ մագիստրատուրան: 07.05.2009-22.06.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ, 22.06.2010-01.10.2010թթ.՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավորի օգնական, 01.10.2010-08.10.2010թթ.՝ ՀՀ դատական դեպարտամենտի արարողակարգի հարցերով պատասխանատու, 08.10.2010-19.12.2011թթ.՝ ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչության մասնագետ: 19.12.2011թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտում՝ որպես կազմակերպարարական վարչության ավագ մասնագետ: 2010թ-ից հանդիսանում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ: Ամուսնացած է:

Լիանա Օնիկի Հակոբյան

Ծնվել է 23.01.1976թ. Երևանում: 1997թ. ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, 2002թ.՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 07.10.1996-08.09.2003թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանում՝ որպես աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ, ապա՝ դատավորի օգնական: 08.09.2003թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ սահմանադրական դատարանում՝ որպես աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության պետ: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ալեքսանդրա Ալեքսեյի Հարությունյան

Ծնվել է 13.03.1979թ. Կապանում: 2000թ. ավարտել է Սիսիանի պետական հումանիտար քոլեջի իրավագիտության ֆակուլտետը, 2008թ.՝ Արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 30.10.2001-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար, ապա՝ դատավորի օգնական: 16.01.2008-29.09.2008թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար: 29.09.2008թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Սամվել Սեյրանի Մատինյան

Ծնվել է 13.04.1976թ. Երևանում: 1997թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսահաշվալին ֆակուլտետը, 2004թ.՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 16.03.1999-28.04.2003թթ. աշխատել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական, 05.05.2003-12.02.2009թթ.՝ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 20.02.2009թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Միքայել Գագիկի Մելքունյան

Ծնվել է 01.12.1983թ. Բաքվում: 2003թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2005թ.՝ մագիստրատուրան: 14.04.2008-09.09.2008թթ. աշխատել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, 09.09.2008-28.02.2009թթ.՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, 06.03.2009-15.12.2010թթ.՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 15.12.2010թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Արկաղիկ Պերճի Մկրտչյան

Ծնվել է 02.09.1984թ. Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղում: 2007թ. ավարտել է «Հրաչյա Աճառյան» համալսարանը՝ իրավագետի որակավորմամբ: 20.12.2005-24.12.2007թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական, 01.01.2008-01.12.2010թթ.՝ ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական, 01.12.2010-07.12.2011թթ.՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 07.12.2011թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես նախագահի խորհրդական: Ամուսնացած է:

Արսեն Սերժիկի Նիկողոսյան

Ծնվել է 22.04.1981թ. Երևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2004թ.՝ մագիստրատուրան: 2007թ. ստացել է իրավագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009թ. ավարտել է Թաֆթսի Համալսարանի Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցը: 2011թ. ստացել է ԵՊՀ իրավագիտության դոցենտի կոչում: 2002-2004թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմում՝ որպես իրավաբանական վարչության առաջատար մասնագետ: 01.02.2005թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունում/ պետական եկամուտների կոմիտեում՝ նախ որպես իրավաբանական վարչության մասնագետ, այնուհետև՝ հայցային աշխատանքների բաժնի առաջատար մասնագետ, այնուհետև՝ օպերատիվ-հետախուզության վարչության ավագ օպերլիազոր, այնուհետև՝ իրավաբանական վարչության իրավական վերահսկողության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ, այնուհետև՝ գլխավոր մասնագետ: 30.01.2009թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում՝ որպես իրավաբանական վարչության պետի տեղակալ: 2004թ.-ից առ այսօր դասախոսում է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Գևորգ Միքայելի Սոսյան

Ծնվել է 29.07.1981թ. Երևանում: 2007թ. ավարտել է Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտը իրավագետի որակավորմամբ: 2011թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան: 08.09.2006-07.12.2007թթ. աշխատել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա տարածքային կենտրոնում՝ որպես իրավախորհրդատու, 07.12.2007-07.01.2008թթ.՝ նույն տեսչության իրավական ապահովման և փաստաթղթային հոսքերի կառավարման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, 10.01.2008-12.02.2009թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 04.03.2009թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Անուսնացած է, ունի 1 երեխա: